

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Էդմոն Մարությունի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-633-09.10.2014-ՊԻ-010/0 և Պ-633¹-09.10.2014-ՊԻ-010/0) վերաբերյալ:

I. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

1. Նախագծի 1-ին հոդվածի անհրաժեշտությունն առկա չէ, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 357-րդ հոդվածն արդեն իսկ

սահմանում է, որ դատարանները դատավճիռները կայացնում են հանուն Հայաստանի Հանրապետության:

2. 4-րդ հոդվածում անհրաժեշտ է՝

1) «կանչված այլ անձանց» բառերից առաջ լրացնել «վճարել դատարանի նիստին բացատրություններ տալու համար» բառերը, քանի որ խոսքը բացատրությունների համար կանչված անձանց մասին է.

2) հստակեցնել, թե ինչով է պայմանավորված նիստում վճարել դատարանի որոշման միայն եզրափակիչ մասի հրապարակումը, քանի որ թե՛ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության, թե՛ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերում նախատեսված է, որ նիստում հրապարակվում է վճարել դատարանի որոշումը: Ուստի միասնական մոտեցում ապահովելու նպատակով գտնում ենք, որ անհրաժեշտ է «եզրափակիչ մասը» բառերը փոխարինել «որոշումը» բառով:

3. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝

1) 1-ին հոդվածում անհրաժեշտ է «01» թիվը փոխարինել «1» թվով.

2) 3-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «հետևյալ» բառը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջների:

Նույն դիտողությունը վերաբերում է նաև նախագծի 4-րդ և 5-րդ հոդվածներին.

3) 5-րդ հոդվածում անհրաժեշտ է «414¹» և «414³» թվերը փոխարինել «414.1» և «414.3» թվերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի պահանջները:

II. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

Նախագծին կից ներկայացված հիմնավորումում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 18-20-րդ հոդվածների պահանջներին: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով չի սահմանափակվում անձի իրավունքը դիմելու վճռաբեկ դատարան, այլ միայն ամրագրվում է անձի սահմանադրական իրավունքն իրականացնելու արդյունավետ եղանակը:

Նախագծի հիմնավորումում անդրադարձ է կատարվել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածին: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ փաստաբանի միջոցով վճռաբեկ բողոք բերելու ինստիտուտի՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված պահանջների համապատասխանության հարցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննարկման առարկա է դարձել հիմնականում Լեհաստանի Հանրապետության դեմ բերված բողոքներով: Վերջինիս ներպետական օրենսդրությամբ սահմանվում է վճռաբեկ դատարանի կողմից բողոքի մերժման հնարավորությունը, եթե այն ներկայացված չէ փաստաբանի կամ իրավախորհրդատուի միջոցով:

Այսպես, դատարանը *Staroszczyk v. Poland* գործով կայացրած վճռում ամրագրել է, որ վճռաբեկ դատարանում դիմողի շահերը որակավորում ունեցող փաստաբանի կողմից ներկայացնելու պահանջը չի կարող ինքնին համարվել 6-րդ հոդվածին հակասող (*Steu, Staroszczyk v. Poland, 2007թ. մարտի 22-ի վճիռ, թիվ 59519/00, պարբերություն 128*): Մասնավորապես, այդ գործում համաձայն լեհական օրենսդրության՝ դատավարության կողմը երկրորդ ատյանի դատարանի վճռի դեմ վճռաբեկ բողոք բերելիս պետք է օգտվի փաստաբանի կամ իրավախորհրդատուի ծառայություններից: Եթե բողոքը բերվում է առանց իրավաբանական

ներկայացուցչության, ապա այդ հանգամանքը կարող է դատարանի կողմից բողոքը մերժելու հիմք հանդիսանալ: Դատարանն այդ գործում նշել է, որ այս դրույթն ինքնին (per se) չի կարող դիտարկել որպես կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջները հակասող (վերոնշյալ *Staroszczyk v. Poland*, պարբերություն 130; *Sialkowska v. Poland*, թիվ 8932/05, պարբերություն 108; *Bakowska v. Poland*, թիվ 33539/02, պարբերություն 45): Ավելին, դատարանն այդ գործում համաձայնել է Լեհաստանի բարձրագույն դատարանի այն վերլուծության հետ, որի համաձայն այդպիսի ընթացակարգ սահմանելն արդարացված է ավելի գրագետ և հաջողության հեռանկար ունեցող բողոքներ ներկայացնելու անհրաժեշտությամբ (*Staroszczyk v. Poland*, 2007թ. մարտի 22-ի վճիռ, թիվ 59519/00, պարբերություն 134):

Չհամաձայնվելով նախագծի հիմնավորումների հետ, այդուհանդերձ, ընդունելի ենք համարում ներկայացված առաջարկությունը, քանի որ՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2008 թվականի հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշման համաձայն փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտը, որպես այլընտրանքային տարբերակ, իրավաչափ կարող է համարվել միայն այն դեպքում, երբ օրենսդրությունը փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորությունը երաշխավորի յուրաքանչյուրի համար՝ անկախ տվյալ անձի ֆինանսական հնարավորություններից: Սակայն հիշյալ ինստիտուտի կիրառումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի համար կառաջացնի լրացուցիչ ֆինանսական բեռ:

Այս առումով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից համապատասխան ուսումնասիրություններ են կատարվել, որոնց համաձայն պալատին հատկացված հանրային պաշտպանների միջոցով օբյեկտիվորեն հնարավոր չէ ապահովել բոլոր անապահով անձանց վճռաբեկ բողոք կազմելու իրավաբանական օգնությամբ, քանի որ այդ հոսքը հիմնականում արհեստածին է և ուղղված է բացառապես փաստաբանի կողմից վճռաբեկ բողոքը ստորագրելուն, այլ ոչ թե իրավաբանական օգնություն տրամադրելուն:

Միաժամանակ հարկ է նշել, որ ներկայումս առկա է օրենսգրքում կատարված փոփոխությունների դրական արդյունքը, քանի որ հստակ սահմանվել են վճարել բողոքին ներկայացվող պահանջները:

Այսպիսով, չհամաձայնելով նախագծի հիմնավորումների հետ, այդուհանդերձ, հաշվի առնելով ներկայացված առաջարկության սոցիալական ուղղվածությունը, ընդունելի ենք համարում ներկայացված նախագծերի ընդունումը: Դեռ ավելին, միասնական մոտեցում ամրագրելու նպատակով առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կատավարությունը ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկությունների ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կատավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության
վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ
օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական
դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի
փաթեթի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության
վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում
փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական
դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի
նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ
կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով (այսուհետ՝ Նախագծեր) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հստակեցվում են վճռաբեկ բողոքը ստորագրելու իրավասու անձիք, ինչպես նաև վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու կարգը:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *առաջարկվում է ամրագրել քրեական և վարչական գործերով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց անունից անձամբ վճարել բողոք բերելու հնարավորությունը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն **չի նախատեսվում:**

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) լրամշակված տարբերակի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերի փաթեթով առաջարկվում է՝

1. սահմանել, որ քրեական և վարչական դատավարության մասնակիցները վճարել բողոք կարող են ներկայացնել նաև ինքնուրույն՝ առանց փաստաբանի մասնակցության,

2. սահմանել վճարել դատարանի կողմից որոշում կայացնելու կարգ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունումը ՀՀ պետական բյուջեի ծախսերի և եկամուտների վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-633-09.10.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 01-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 393-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դատական ակտը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության:»:

Հոդված 2. Օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«5. Վճռաբեկ բողոքն ստորագրում է բողոք ներկայացնող անձը, բողոք ներկայացնող անձի փաստաբանը, գլխավոր դատախազը կամ նրա տեղակալը: Բողոքը փաստաբանի կողմից ներկայացվելու դեպքում բողոքին կցվում է փաստաբանի՝ սույն օրենսգրքով սահմանված կարգով ձեւակերպված լիազորագիրը: Վճռաբեկ բողոքին կցվում է նաեւ վճռաբեկ բողոքի էլեկտրոնային տարբերակը (էլեկտրոնային կրիչը):»:

Հոդված 4. Օրենսգրքի 423-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 423. Վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու կարգը

1. Վճռաբեկ դատարանը գործի քննության արդյունքներով կայացնում է որոշում:
2. Որոշումը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության:
3. Որոշումը կայացվում է բողոք բերած անձի եւ կանչված այլ անձանց բացակայությամբ:
4. Որոշումը կայացվում է բաց քվեարկությամբ: Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Ձայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է ամբաստանյալի համար:
5. Որոշումն ստորագրում են որոշում կայացրած դատավորները:
6. Որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է նիստում:
7. Որոշումը կայացման օրվանից ողջամիտ ժամկետում ուղարկվում է բողոք բերած անձին եւ դատավարության մյուս մասնակիցներին:»:

Հոդված 5. Օրենսգրքի 424-րդ հոդվածը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.

«Հոդված 424. Վճռաբեկ դատարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը

1. Վճռաբեկ դատարանի՝ գործի քննության արդյունքներով կայացված որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է եւ ենթակա չէ բողոքարկման:
2. Վճռաբեկ դատարանի՝ սույն օրենսգրքի 4141-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով եւ 4143-րդ հոդվածով նախատեսված որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում կայացման պահից, վերջնական են եւ ենթակա չեն բողոքարկման:»:

Հողված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-633¹-09.10.2014-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հողված 1. Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 05-ի վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հողված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

1. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2014 թվականի հունիսի 10-ի թիվ ՀՕ-48-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ քրեական դատավարության օրենսգիրք) սահմանվել են վճռաբեկ դատարանի որոշումներն ուժի մեջ մտնելը կարգավորող 2 հոդված՝ 423-րդ եւ 424-րդ հոդվածները: Մինչ հիշյալ փոփոխությունները գործող խմբագրությամբ 423-րդ հոդվածը կարգավորում էր վճռաբեկ դատարանի կողմից որոշումներ կայացնելու կարգը, մինչդեռ, փոփոխություններով այդ կարգը նախատեսող նոր նորմ չսահմանելու պայմաններում դրա խմբագրությունը բովանդակային առումով ամբողջովին փոփոխվել է՝ ստեղծելով իրավական անորոշություն: Մասնավորապես, գործող կարգավորման պայմաններում քրեական դատավարության օրենսգրքով վճռաբեկ դատարանի կողմից որոշում կայացնելու կարգ նախատեսված չէ:

2. Նախորդ տարվա դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց նոր վարչական դատավարության օրենսգիրք, որը բազմաթիվ դրական փոփոխություններով հանդերձ, չէր կարող զուրկ լինել թերություններից: Խոսքը մասնավորապես վերաբերում է 154-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի՝ ֆիզիկական ու իրավաբանական անձինք վճռաբեկ բողոք կարող են բերել միայն փաստաբանի միջոցով: Ընթացիկ տարվա հունիսից նույնական կարգավորում է գործում նաեւ քրեական դատավարությունում (քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մաս):

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 18-րդ հոդվածի ուժով՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի դատական պաշտպանության իրավունքն իրականացնելու ինչպես իր ներկայացուցչի կամ պաշտպանի միջոցով, այնպես էլ անձամբ: Այս դրույթը կոչված է ապահովելու Հայաստանի Հանրապետության կողմից միջազգայնորեն ստանձնված պարտավորությունը. մասնավորապես՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք, ի թիվս այլնի, իրավունք ունի պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ վարչական դատավարության օրենսգրք) 154-րդ հոդվածի 4-րդ մասը և քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 4-րդ մասը հակասության մեջ են գտնվում Սահմանադրության 18-20-րդ հոդվածների և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի հետ, քանի որ բացառում են քրեական ու վարչական գործերով ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրենց անունից անձամբ վճարել բողոք բերելու հնարավորությունը: Ընդ որում, եթե քրեական գործերով անձամբ (անգլ.՝ in person) քրեական մեղադրանքից պաշտպանվելու հնարավորությունը բառացի է նշվում Կոնվենցիայում, ապա վարչական գործերի մասով անհրաժեշտ է բացահայտել նախադեպային իրավունքը:

Վարչական դատավարության կարգով քննվող՝ անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի մի ստվար զանգված համապատասխանում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի «քրեական մեղադրանք» հասկացությանը: «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի 2007թ. դեկտեմբերի 20-ի վճռում Մարդու իրավունքների եվրոպական Դատարանը (այսուհետ՝ Եվրոպական Դատարան) մեկ անգամ եւս նշել է, որ «քրեական մեղադրանք» հասկացությունը 6-րդ հոդվածի իմաստով ինքնավար բնույթ ունի: Որոշելիս, թե արդյոք հանցանքը որակվում է «քրեական», պետք է կիրառվեն երեք չափանիշ՝ հանցանքի իրավական դասակարգումը ներպետական օրենսդրությունում, հանցանքի բնույթը և հնարավոր պատժի խստության աստիճանը (Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդեռլանդների (Engel and others v. the Netherlands), 1976թ. հունիսի 08-ի վճիռը, Սերիա Ա, թիվ 22, էջեր 34-35, « 82, Օգթյուրքն ընդդեմ Գերմանիայի (ՃztՖրk v. Germany), 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, Սերիա Ա, թիվ 73, էջ 18, « 50, Էզենն ու Քոնորզն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ezeh and Connors v. the United Kingdom) [GC], թիվ 39665/98 և 40086/98, « 82, ECHR 2003-X): Նշված երեք չափանիշներից վերջին երկուսն այլընտրանքային են, ոչ թե գումարային, ինչի մասին Եվրոպական Դատարանը կրկին հիշեցրել է «Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ի գործով վճռում. մասնավորապես՝ երկրորդ և երրորդ չափանիշներն այլընտրանքային են և ոչ անհրաժեշտաբար միասնական. «քրեական մեղադրանք» բառերի միջոցով 6-րդ հոդվածը կիրառելու համար բավարար է, որ տվյալ հանցանքն իր բնույթով լինի «քրեական» Կոնվենցիայի իմաստով կամ համապատասխան անձը դատապարտված լինի պատժի, որն իր բնույթով և խստության աստիճանով, ընդհանուր առմամբ, պատկանում է քրեական ոլորտին (Յանոշեվիչն ընդդեմ Շվեդիայի (Janosevic v. Sweden), « 67): Հարկային վեճերի կամ այլ դեպքերում պատժի ցածր աստիճանը որոշիչ չէ քրեական բնույթ ունեցող հանցանքը 6-րդ հոդվածի շրջանակից դուրս բերելու համար (Յուսիլան ընդդեմ Ֆինլանդիայի (Jussila v. Finland), « 35, որտեղ Եվրոպական Դատարանը գտել է, որ 6-րդ հոդվածը կիրառելի է նույնիսկ այն դեպքում, երբ նշանակված տույժը հավասար է եղել հարկային պարտավորության միայն 10 տոկոսին):

«Պայքար և Հաղթանակ» ՍՊԸ-ի գործով վճռում Եվրոպական Դատարանն անդրադառնալով երկրորդ չափանիշին, նշել է հետևյալը. «35. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

համապատասխան դրույթները կիրառելի են բոլոր անձանց նկատմամբ՝ եւ 'ֆիզիկական, եւ 'իրավաբանական, որոնք պարտավոր են հարկ վճարել եւ ուղղված չեն որոշակի խմբին: Բացի այդ, տույժերի ու տուգանքների նպատակը հարկատուի վարքագծի արդյունքում հնարավոր առաջացած ծախսերի նյութական հատուցումը չէ: Այս միջոցառումների նպատակը հարկատուների նկատմամբ ճնշում գործադրելն է, որպեսզի վերջիններս կատարեն իրենց իրավական պարտավորությունները եւ այդ պարտավորությունները խախտելու համար նրանց պատժելը: Այսպիսով՝ պատժամիջոցները եւ 'կանխարգելիչ են, եւ 'պատժիչ:

36. Դատարանը գտնում է, որ վերը նշվածը բավարար է իրավախախտման քրեական բնույթը հաստատելու համար: Այնուամենայնիվ պետք է նաեւ նշել, որ տվյալ դեպքում դիմումատու ընկերության նկատմամբ նշանակվել էին բավական զգալի պատժամիջոցներ՝ տուգանքներ 10-50 տոկոսի սահմաններում եւ տույժեր վճարման ուշացման ժամանակահատվածի համար ընդհանուր իրար հետ մոտավորապես հարկային պարտավորության գումարի 5-43 տոկոսի չափով:

37. Վերոգրյալի լույսի ներքո Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի մասնակցությամբ դատավարությունը կարող է դասակարգվել որպես «քրեական» Կոնվենցիայի իմաստով: Հետեւաբար 6-րդ հոդվածը կիրառելի է»:

Ուստի՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը բազմաթիվ դեպքերում համապատասխանում են «քրեական մեղադրանք» հասկացությանը, եւ Հայաստանը պարտավորվել է նման պատասխանատվության ռիսկի ենթակա անձանց Սահմանադրությամբ եւ Կոնվենցիայով երաշխավորել ու ապահովել դատական պաշտպանության իրավունքն անձամբ իրականացնելու իրավունքը:

3. Դեռեւս 2008թ. հոկտեմբերի 08-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն (այսուհետ՝ Սահմանադրական դատարան) իր ՍԴՈ-765 թվակիր որոշմամբ նշել է հետեւյալը. «16. Սահմանադրական դատարանը՝ հաշվի առնելով, որ հավատարմագրված փաստաբանների եւ մյուս փաստաբանների միջեւ մասնագիտական պատրաստվածության եւ փորձառության հարցում չկա որեւէ տարբերություն, որ օրենսդրությունը վճռաբեկ դատարան դիմելիս հստակորեն չի երաշխավորում անվճար իրավաբանական օգնությունից օգտվելու հնարավորությունը, որ նույնիսկ հավատարմագրված փաստաբանների կողմից կազմված բողոքների գերակշիռ մեծամասնությունը քննության չի ընդունվում վճռաբեկ դատարանում, ինչպես նաեւ նկատի ունենալով հավատարմագրված փաստաբանների սեղմ թվաքանակն ու նրանց գործունեության ձեռնարկատիրական բնույթով պայմանավորված՝ վճռաբեկ բողոք կազմելուց հրաժարվելու ազատությունը, գտնում է, որ արդարացի հավասարակշռությունը ՀՀ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների միջոցով վճռաբեկ դատարան ներկայացնելու պահանջի եւ դրանով հետապնդվող նպատակի միջեւ, այն է՝ ապահովել որակյալ վճռաբեկ բողոքների կազմումը, խախտված է այնքան, որ խաթարվել է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջով վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը համաչափ չէ իր նպատակին, քանի որ նման սահմանափակումը թույլ չի տալիս արդյունավետորեն եւ անարգել իրացնել անձի արդար դատաքննության իրավունքը»:

Նույն որոշման մեջ հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու պարտադիր պահանջի ազդեցությունը վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքի վրա գնահատելիս՝ կարելի է նաեւ այն խնդիրը, թե արդյոք գործող օրենսդրությունն ապահովում է վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման իրավական հնարավորությունը: Այնուհետեւ արձանագրել է հետեւյալը. « ո՛չ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, ո՛չ էլ ՀՀ քրեական եւ քաղաքացիական դատավարության օրենսգրքերը չեն նախատեսում վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրում, այն է՝ վճռաբեկ բողոք կազմելու իրավական հնարավորություն»:

Ելնելով վերոհիշյալից՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով իրավաբանական օգնության տրամադրման կարգ եւ վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանների կողմից անվճար հիմունքներով երաշխավորված իրավաբանական օգնության տրամադրման որեւէ մեխանիզմ չնախատեսելու պայմաններում՝ հավատարմագրված փաստաբանների գոյությունն անհամաչափորեն սահմանափակում է վճռաբեկ դատարանի մատչելիության իրավունքը՝ այդ դատարանում իրավունքների պաշտպանությունից օգտվելու դատավարության մասնակցի հնարավորությունը գործնականում պայմանավորելով նրա ֆինանսական հնարավորություններով:

Սահմանադրական դատարանը հարկ է համարել նաեւ ընդգծել հետեւյալը. « ՀՀ Սահմանադրության 20 հոդվածի 1-ին մասի ընկալմամբ՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը ներառում է, նախ՝ որակյալ իրավաբանական ծառայություն ստանալու հնարավորությունը, երկրորդ՝ պետության պարտավորությունը՝ որակյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ապահովելու բոլոր նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնուրույն ստանալ այդպիսի օգնություն: Պետության նշված պարտավորությունը ենթադրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտ է փաստաբանի պարտադիր ներկայացուցչություն կամ այն բխում է դատավարության շահերից, յուրաքանչյուր կարիքավոր պետք է իրավունք ունենա ստանալու իրավաբանական որակյալ օգնություն: Դա բխում է արդարադատության իրականացման բնագավառում իրավաբանական ծառայության մատուցման եվրոպական փորձից, ինչպես նաեւ իրավաբանների եւ իրավաբանական ծառայության մատչելիության վերաբերյալ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված սկզբունքներից»:

Փաստ է, որ օրենսդրությունը վարչական գործերով փաստաբանի ծառայությունից օգտվելու հնարավորություն՝ անկախ ֆինանսական հնարավորություններից, չի երաշխավորում:

Խնդրո առարկա հոդվածում, իհարկե, ձեռակերպումն այլ է, սակայն փաստացի, վերադարձ ենք կատարում նախկին հակասահմանադրական ճանաչված վճռաբեկ դատարանում հավատարմագրված փաստաբանի միջոցով վճռաբեկ դատարան դիմելու ինստիտուտին:

4. Վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասը չի համապատասխանում նաեւ Սահմանադրության 14.1-րդ եւ Կոնվենցիայի 14-րդ հոդվածներին, քանի որ վարչական մարմիններին հնարավորություն է ընձեռում վճռաբեկ բողոք բերել՝ առանց այն սահմանափակման, ինչ նախատեսված է ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար:

Եթե ենթադրենք, որ խնդրո առարկա հոդվածով վարչական մարմինների եւ մասնավոր անձանց միջեւ վճռաբեկ բողոք բերելու մասով խտրականության սահմանման նպատակը դատարան ներկայացվող դիմումի որակի բարձր լինելն է, ապա առկա իրավակարգավորումը կարող է ստեղծել այնպիսի իրավիճակ, որ վարչական մարմնի անունից վճռաբեկ բողոքը հեղինակի (բերի)՝ անգամ իրավաբանական կրթություն չունեցող անձը եւ վճռաբեկ դատարանի կողմից դա չի դիտվի անընդունելի, սակայն անձանց անունից ներկայացված վճռաբեկ բողոքը, որ հեղինակել է իրավաբանական գիտությունների դոկտորը կամ պաշտոնաթող դատավորը կամ փաստաբանների դպրոցի դասախոսը՝ գնահատվի որպես «սխալ», միայն այն պատճառով, որ բողոքի հեղինակը Փաստաբանների պալատի անդամ չէ եւ չունի փաստաբանական գործունեության արտոնագիր:

Օրենսգրքում նման խտրական մոտեցման դրդապատճառները, օբյեկտիվության եւ ողջամտության հիմքերը, միջոցի եւ հետապնդվող նպատակի միջեւ ողջամիտ հարաբերակցությունը բացակայում են:

«93. Ինչպես հիմնավորապես սահմանված է Դատարանի նախադեպային իրավունքում, վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է համարվում 14-րդ հոդվածի նպատակների համար, եթե այն չունի որեւէ օբյեկտիվ եւ ողջամիտ արդարացում, այն է՝ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե կիրառվող միջոցների եւ հետապնդվող նպատակի միջեւ չկա

համամասնության ողջամիտ հարաբերակցություն (Սահինն ընդդեմ Գերմանիայի (Sahin v. Germany), 2003թ. հուլիսի 08-ի վճիռը)»:

Ավելին՝ ներկայիս սոցիալական պայմաններում քաղաքացիների մի սովոր զանգված փաստաբան վարձելու հնարավորություն չունի իր շահերը դատարանում պատշաճ ներկայացնելու համար, ինչը նշանակում է, որ շատերը զրկված են վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունքից ու հնարավորությունից: Եթե փաստաբանների միջոցով բողոք ներկայացնելու օրենսդրական պահանջի միջոցով հետապնդվող նպատակը՝ որակյալ բողոքների կազմումն է, ապա փաստաբանների միջոցով բողոք ներկայացնելու պահանջի եւ դրանով հետապնդվող նպատակի միջեւ արդարացի հավասարակշռությունը խնդրո առարկա նորմով խախտված է այնքան, որ խաթարում է դատարանի մատչելիության իրավունքի էությունը:

Դատարանի մատչելիության իրավունքը պետք է լինի իրական եւ ոչ թե պատրանքային, ինչը ենթադրում է, որ անձն իր իրավունքների ու ազատությունների խախտման յուրաքանչյուր դեպքում՝ ողջամիտ սահմանափակումների պայմաններում, պետք է դատարան դիմելու, իր խախտված իրավունքները եւ ազատությունները վերականգնելու իրական հնարավորություն ունենա. տվյալ դեպքում վարչական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումը ողջամիտ չէ եւ անձի՝ դատարանի դիմելու իրավունքը դարձնում է տեսական, ձեւական, վերացական ու պատրանքային:

Ներկայացված նախագծով վերոնշյալ օրենսդրական բացերը շտկվում են:

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման առնչությամբ այլ օրենքների ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: